

ՀՀ ԳԱԱ Ս. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր

ԴՐԱՅԹԱ ՇՊՆԵՑՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ս. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի կատարող, տ.գ.դ.

ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ
ԱՆՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿՃԲՈՒՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ազրոպարենային համակարգն ավանդաբար եղել է երկրի տնտեսության առաջատար ոլորտներից մեկը: Վերջին տարիներին ոլորտում իրականացվող տնտեսական վերափոխումների արդյունավետության բարձրացման, շուկայական տնտեսության իրավահարաբերությունների արմատավորման, տնտեսավարողների համար քարենապատ տնտեսական միջավայրի ձևավորման, միջավետական փոխահավետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև ներպետական քաղաքական վիճակի կայունության շնորհիվ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվել ազրարային հանովածի կայուն զարգացման համար: Ազրոպարենային համակարգի համալիր զարգացումը մեծապես պայմանավորված է նրա առանցքային ճյուղի՝ գյուղատնտեսության համաշափ զարգացմամբ, հաշվի առնելով տնտեսության այդ հատվածում բնակչության (հողային, ջրային), աշխատանքային, արտադրական, նյութատեխնիկական ռեսուրսների առկա ներուժը և այն փաստը, որ ինչպես ներկայումս, այնպես էլ տեսանելի հեռանկարում գյուղական համայնքների բնակչության գերակշռող մասի կենսամակարդակի բարձրացումը խթանելու են գյուղատնտեսական արտադրությունից, գյուղատնտեսությունում վարձու աշխատանքից և սննդի վերամշակող արդյունաբերությունում գրադարձության արդյունքում ստացված եկամուտները: Երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է գյուղական համայնքներում մրցակցային ներուժ ունեցող այլ ճյուղերի (մասնավորապես հանքահումքային արդյունաբերության, էներգետիկայի, գրոսաշրջության) զարգացումը:


Այսուհանդերձ, ազրոպարենային համակարգի հետագա զարգացումը խոչընդոտվում է մի շարք գործուներով, որոնցից կարելի է առանձնացնել գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողաբաժինների մասնատվածությունը, հարաբերական սակավահողությունը և սակավաջրությունը, խոշոր ապրանքային տնտեսությունների ցածր տեսակարար կշիռը, արտադրական և շուկայական (ֆինանսական) ներքակառուցվածքների դեռև թերզարգացածությունը: Ազրոպարենային համակարգի առջև ծառացած խնդիրների լուծման առավել արդյունավետ միջոցը՝ տնտեսավարողների վարկավորման մատչելիության բարձրացումն է: Վերջինս հնարավորություն կընձեռի բարձրացնել ոլորտի մրցունակությունը, նպաստել գյուղական համայնքների ամրապնդմանը, հատկապես սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային գոտում և բարեկավել գյուղական բնակչության կենսապայմաններն ու կյանքի որակը:

Ներկայումս առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույթների պատճառով, դրանք գրեթե անմատչելի են բազմաթիվ տնտեսավարողների համար, ուստի այդ բնագավառում նույնպես անհրաժեշտություն է առաջանալ իրականացնելու պետական հովանավորչական քաղաքականություն, ինչը կնպաստի տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամբերի մրցակցության բարձրացմանը: Նշված քաղաքականությունը բխում է նաև գյուղատնտեսության ոլորտում

հարկային արտոնությունների համակարգից՝ սուբսիդավորման համակարգի աստիճանական անցման անհրաժեշտությունից:

Հանրապետության գյուղատնտեսության ոլորտը կարևորագույն տեղ ունի երկրի տնտեսության կառուցվածքում: Վերջին 5 տարիների միջին տվյալներով երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) ագրոպարենային համակարգի տեսակարար կշիռը միջին հաշվով կազմել է 27.7 տոկոս, որից գյուղատնտեսության մասնաբաժինը՝ 20.8 տոկոս: Ագրոպարենային համակարգի տեսակարար կշիռը, ըստ ճյուղերի, գրաֆիկական պատկերմամբ տրվում է 1-ին գծապատկերում:

Ակնհայտ է, որ երկրի ՀՆԱ-ի կառուցվածքում ագրոպարենային համակարգի առանցքային ճյուղերի՝ գյուղատնտեսության և գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության մասնաբաժինը վերջին տարիներին ունեցել է նվազման միտում, ինչը պայմանավորված է տնտեսության մյուս ոլորտների, մասնավորապես շինարարության, առևտուրի և ծառայությունների, արդյունաբերության առաջանցիկ աճով, սակայն բացարձակ մեծություններով ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ծավալները տարեցտարի ունեցել են աճի կայուն միտում, և բերված տվյալները վկայում են երկրի ընդհանուր տնտեսության մեջ ագրոպարենային ոլորտի տեղի ու դերի կարևորության մասին:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի ճյուղերի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում¹:


Նշվածը վկայում է, որ գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացումը պայմանավորում է մակրոտնտեսական իրավիճակի բարելավումը և աղքատության հաղթահարման հիմնական ուղիներից մեկն է:

¹ Հիմք են ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները:

Գյուղական բնակավայրերում բնակչության եկամուտների կառուցվածքում գերակշռող մաս են կազմում գյուղատնտեսական մթերքների իրացումից և վարձու աշխատանքից ստացվող եկամուտները: 2004-2006 թվականների տվյալներով տնտեսության մեջ շնչի հաշվով գյուղատնտեսական մթերքի իրացումից և վարձու աշխատանքից ստացվող եկամուտների բաժինը միջին հաշվով կազմել է 60.3 %¹: Հանրապետության ազրոպարենային համակարգը բացառիկ կարևոր դեր ունի նաև երկրի բնակչության պարենային ապահովության բնագավառում: Հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների հիման վրա կատարված հաշվարկները վկայում են, որ կարևորագույն պարենամթերքի տեղական արտադրության հաշվին ապահովածության (ինքնարավության) մակարդակի փոփոխությունը նույնական ունեցել է դրական միտում, այսպես՝ 2003, 2004, 2005 թվականներին ինքնարավության մակարդակը, հաշվարկված էներգետիկ արժեքով, համապատասխանաբար կազմել է՝ 47.1, 49.0 և 51.3 տոկոս²: 2006 թվականին՝ բուսաբուծության ճյուղի համար անբարենպաստ պայմանների պատճառով, հատկապես հացահատիկի ցածր բերքի, ինքնարավության մակարդակը կազմել է 46.8 տոկոս, սակայն 2007 թվականի արտադրության ծավալների աճի հաշվին այդ ցուցանիշը բարձր է 2006 թվականի ցուցանիշից:

Այնուամենայնիվ կարևորագույն պարենամթերքի ինքնարավության վերը նշված մակարդակը դեռևս բավարար չէ երկրի պարենային անկախության ապահովման տեսանկյունից, որին մեծապես կնպաստի ազրոպարենային ոլորտի վարկավորման բարենպաստ պայմանների ստեղծումը, մասնավորապես վարկերի տոկոսադրույթների մասնակի սուբսիդավորումը:

Հանրապետության ազրոպարենային համակարգը զգալի դեր ունի նաև երկրի արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում: Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշռի և պարենամթերքի առևտրաշրջանառության ցուցանիշները ներկայացված են գրաֆիկական պատկերմամբ (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշռի և պարենամթերքի առևտրաշրջանառության փոփոխությունը 2003-2007 թթ.³

¹ Պարենային ապահովություն և առքատություն: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2007թ., էջ 73-77:

² Հաշվարկվել է՝ հիմք ունենալով՝ ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի 2004-2006 թվականները:

³ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով:

Գծապատկերից երևում է, որ Վերջին 5 տարիների ընթացքում պարենամթերքի արտահանումն աճել է 2.1 անգամ, իսկ ներմուծումը՝ 2.4 անգամ, որը բացասական միտում է: Ազրոպարենային ոլորտի զարգացման արդի փուլում ներմուծվում են մի շարք պարենային ապրանքներ, որոնց պահանջարկը նախկինում բավարարվում էր տեղական արտադրության հաշվին և, մյուս կողմից, կրճատվել են մի շարք գյուղմթերքի թարմ և վերամշակված տեսքով արտահանման ծավալները: Ստեղծված վիճակի բարելավումը պահանջում է ազրոպարենային համակարգի տարրեր ճյուղերի նկատմամբ տարրերակված քաղաքականության կիրառում, որը հնարավոր է մասնավորապես վարկային տոկոսադրույժների սուբյեկտավորման միջոցով՝ նկատի ունենալով առաջին հերթին փոքրածավալ արտադրություն ունեցող տնտեսավարողների աջակցությունը:

Ազրարային վերափոխումների արդյունքում հանրապետությունում ձևավորվել են բազմահազար գյուղացիական տնտեսություններ (2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործում էին մոտ 339.2 հազար գյուղացիական տնտեսություններ և առևտրային կազմակերպություններ): Տնտեսություններն ունեն փոքր չափեր, մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին են ընկնում 1.43 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից վարելահողեր՝ 1.11 հա¹:

Ներկայում (2007 թ. տվյալներով) գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում գերակշռող տեղ ունեն հացահատիկը (58.0 %), այնուհետև՝ կերային մշակաբույսերը (20.8 %), կարտոֆիլը (10.4 %), բանջարեղենը (8.3 %)²:

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը 2007 թվականի համար բնութագրվում է հետևյալ տվյալներով. բուսաբուծություն՝ 67.8 %, անասնապահություն՝ 32.2 %³, 1990 թվականի համապատասխանաբար՝ 49.4 և 50.6 %-ի դիմաց:

Ներկայում երկրի գյուղատնտեսության զարգացումը խոչընդունվում է մի շարք գործուներով, որոնցից առանձնանում էն՝

- գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարման տարրեր ձևերի ձևավորման դանդաղ ընթացքը: Ներկայում հանրապետությունում գյուղատնտեսությունը վարկում է 1.2 միլիոնից ավելի հողակտորների վրա, որը հնարավորություն չի ընձեռում իրականացնել արդյունավետ տնտեսավարում և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում,
- գյուղատնտեսական հողատեսքերի, մասնավորապես վարելահողերի շուրջ 30 տոկոսի ոչ նպատակային օգտագործումը, գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքի բարելավման անհրաժեշտությունը,
- գյուղատնտեսության ճյուղում զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակի (տնտեսության մեջ զբաղվածների 45.8 տոկոսը) հետ մեկտեղ գյուղատնտեսությունում աշխատուժի թերթեռնված և ցածր արդյունավետությամբ օգտագործումը,
- գյուղատնտեսության ինտենսիվացման դեռևս ցածր մակարդակի, սերմնաբուծության և տոհմային գործի կազմակերպման համակարգի անկատարության, արտադրության գործընթացում ազրոտեխնիկական ու անասնապահական կանոնների խախտման հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության ցածր մակարդակը,

¹ Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ: «Հ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2006թ., էջ 3»:

² 2007թ. բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարները: «Հ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2007թ.»:

³ «Հ սոցիալ-տնտեսական վիճակը 2007թ. հունվար-դեկտեմբերին: «Հ ազգային վիճակագրական ծառայություն, 2008թ., էջ 22»:

- ազդուարենային համակարգում տնտեսվարողների վարկավորման պահանջարկի բավարարման գործում առկա դժվարությունները, մասնավորապես գյուղացիները յուրաքանչյուր տարի շրջանառու միջոցների խիստ կարիք են օգում, իսկ գործող բանկային համակարգի կողմից վարկավորման պայմանները՝ գրավի առարկայի շրջանակներ, վարկավորման ժամկետ, տոկոսադրույթ և այլն, դժվարամատչելի են գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար,
- գյուղատնտեսության տեխնիկական ապահովման բնագավառում առկա լուրջ խոչընդուները: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր են սարքինության մակարդակը և արտադրողականությունը, հետևարար՝ բարձր են շահագործման ծախսները և ծառայությունների սակագները,
- շնայած պետական աջակցությամբ կատարված օգալի աշխատանքներին (ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման առկա բազմաթիվ հիմնախնդիրներ), Հանրապետության 232.9 հազ. հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է շուրջ 150 հազարը,
- 1990 թվականի համեմատությամբ կերային մշակարույսների ցանքատարածության շուրջ 4 անգամ կրճատումը, բնական կերահանդակների անքավարար օգտագործումը,
- անասնապահության ճյուղում անասնապահական առանձին մթերքների՝ կարի և ծվի արտադրության ծավալների ավելացման՝ հետ մեկտեղ՝ տոկմային գործի կազմակերպման, անասնաբուժական համակարգի ամրապնդման և ոլորտի պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման մեջ առկա շրուծված խնդիրները,
- պարենամթերքի իրացման շուկայի ծևավորման դժվարությունները, որը մի կողմից պայմանավորված է տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ գյուղատնտեսական մթերքի պահանջարկով, մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ, դրանց ծևավորման դանդաղ ընթացքով և արտահանման դժվարություններով,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառում առկա խնդիրները, մասնավորապես նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրանքի մրցունակության բարձրացման, գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների հետ պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների հաստատման և այլ բնագավառներում,
- գյուղատնտեսության արտադրական և սպասարկող նեթակառուցվածքների դեռևս ոչ լիարժեք գործունեությունը, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների արտադրության մեջ չափազանց դանդաղ ներդրումը, այդ բնագավառում կիրառվող մեխանիզմների անկատարությունը,
- գյուղատնտեսության ոլորտում բնական աղետների հետևանքով կորուստների ապահովագրման բացակայությունը և բնական աղետների կանխարգելման կառույցների ծևավորման անկատարությունը: Այս ամենը բացասարար է ազդում գյուղատնտեսության արդյունավետության և ճյուղի կառուցվածքի վրա:

Թվարկված խոչընդուների հաղթահարումը, ինչպես նաև ազդուարենային համակարգում ծառացած տարարնույթ այլ խնդիրների լուծումը պահանջում է տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում, որի կարևորագույն ուղղությունը վարկավորման ապահովումն է:

Գյուղացիական տնտեսությունների սուրսիդավորման արդյունավետ համակարգի ներդրումը ազդուարենային համակարգի զարգացման կարևորագույն նախապայմաններից է:

Գյուղատնտեսական մթերք վերամշակող արդյունաբերությունը, որն առանձնանում է համեմատական առավելություններ և արտահանման ներուժ ունեցող բազմաթիվ արտադրա-

տեսակներով (պոտոլքանջարեղենի պահածոյացված արտադրանք, ոգելից և ոչ ոգելից խմիչքներ, մսամթերք, կաթնամթերք և այլն) նույնպես բնութագրվում է ներդրումների, այդ թվում՝ վարկային ռեսուրսների ներգրավման մեծ պահանջարկով, ինչը երկրի պարենային անվտանգության (անկախության) տեսանկյունից ունի ռազմավարական նշանակություն:

2006 թվականին բանկերի վարկային ներդրումները գյուղատնտեսության մեջ կազմել են ընդամենը 14.2 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 5.5 և գյուղատնտեսական ավելացված արժեքի 3 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ վարկավորման ծավալներն արդյունաբերության մեջ, նույն ժամանակահատվածում կազմել են 39.26 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 15.1 և ավելացված արժեքի 9.8 տոկոսը: Վարկավորման սույն ծավալները, այլ գործոնների հետ մեկտեղ, պայմանավորված են գյուղատնտեսության ոլորտի բարձր ռիսկայնությամբ, հատկապես գյուղատնտեսության ապահովագրության համակարգի բացակայությամբ¹:

Գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի աճն ընթացիկ գներով 2021 թվականին 2006 թվականի համեմատությամբ, ըստ ԱՀՌԾ-2-ի կանխատեսումների, կազմելու է ընդամենը 73.1 %՝ հասնելով 1314.6 մլրդ դրամի (միջին տարեկան զնանը հաշվարկվել է 3 %): Ընդ որում նշված կանխատեսումներով ոլորտի վարկավորումը 2010 թվականին կազմելու է 39.6, 2015թ.՝ 105.5 և 2021թ.՝ 236.6 մլրդ դրամ կամ գյուղատնտեսությունում ավելացված արժեքի նույն տարերվերի համապատասխանարար՝ 6.0, 11.0 և 18.0 տոկոսը²:

Տրամադրվող վարկերի մասնակի սուրսիդավորման արդյունքում հնարավորություն է ընձեռվելու բարձրացնել ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակը, ինչը հանգեցնելու է համախառն արտադրանքի աճի ավելի բարձր տեմպերի: Ներկայումս տրամադրվող վարկերի տոկոսադրույթը միջինը կազմում է՝ շուրջ 15-17 %: Գյուղատնտեսությունում շահութաբերության դեռև ցածր մակարդակի, գրավի բարձր լիկվիդայնության անհրաժեշտության, վարկային ռեսուրսների սղության և մյուս կողմից՝ վարկային շուկայում ձևավորված բարձր պահանջարկի հետևանքով վարկերի ձեռքբերումը բազմաթիվ գյուղացիական տնտեսությունների համար անմատչելի է: Ուստի վարկերի տոկոսադրույթի մասնակի (տարրերակված) սուրսիդավորումը տնտեսապես հիմնավորված է ու արդիական: Դա է վկայում նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը հատկապես անցումային տնտեսության երկրներում: Ըստ գնահատման՝ մատչելի տոկոսադրույթներով (տարեկան 7-10 %-ի միջակայքում) կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի ձեռքբերման պահանջարկը ներկայումս կազմում է մոտ 150 մլրդ դրամ, այդ թվում բուսաբուծությունում՝ 95.0 և անասնապահությունում՝ 55.0 մլրդ դրամ: Ոլորտում տնտեսական աճին զուգընթաց աճելու է նաև վարկավորման պահանջարկը՝ կազմելով տվյալ տարվա համախառն արտադրանքի մոտ 24 %-ը, այդ թվում բուսաբուծությունում՝ 21 %, անասնապահությունում՝ 27 %:

Տարեցտարի աճելու է նաև գյուղատնտեսական մթերք վերամշակող ընկերությունների պահանջարկը վարկային ներդրումների նկատմամբ: Միևնույն ժամանակ այդ գործընթացն ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ ազգութեամշակման բնագավառներում արդյունավետության բարձրացման ինտենսիվ և էքստենսիվ գարգացման շնորհիվ զուգըրդիվելու է տնտեսավարողների վարկունակության բարձրացմամբ:

Տրամադրվող վարկերի տոկոսադրույթների մասնակի սուրսիդավորումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, որպես պետական-մասնավոր հատվածների համագործակցության առավել արդյունավետ ձևերից մեկը, հնարավորություն է ընձեռում նաև դիվերսիֆիկացնել գյուղատնտեսության վարման առկա ռիսկերը 3 կողմերի՝

¹ Աղքատության հաղանարման ռազմավարական ծրագրի վերամայված տարրերակի նախագիծ, Երևան, 2008թ., էջ 114-122:

² Նոյն տեղում:

պետության, վարկավորող կազմակերպությունների և տնտեսավարողների միջև՝ միաժամանակ նպաստելով հանրապետությունում քանկային համակարգի ամրապնդմանը և տրամադրվող վարկերի տոկոսադրույթների աստիճանական նվազմանը, ինչը միանգամայն շահեկան է տնտեսության, այդ թվում՝ ազրոպարենային համակարգի համընդիանուր գարգացման տեսանկյունից:

Տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն (ԱՀԿ) անդամակցելու շրջանակներում ստանձնած պարտավորություններով նախատեսվում են ներքին շուկայի մատչելիության ապահովման, համախառն ներքին աջակցության սահմանափակման, արտահանման լրակճարների բացառման, առևտրի տեխնիկական խոչընդուների վերացման և մի շարք այլ դրույթներ, որոնք միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կարող են բացասարար անդրադառնալ երկրի ազրոպարենային համակարգի մրցունակության վրա: Դրա մասին է վկայում նաև պարենամքերքի ներմուծման-արտահանման ներկայիս խիստ բացասական հաշվեկշիռը: Ուստի, հաշվի առնելով ազրոպարենային հատվածի հարաբերական խոցելիությունը, անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել ոլորտին ցուցաբերվող պետական աջակցությունը, մասնավորապես տրամադրվող վարկերի մասնակի սուբսիդավորման միջոցով:

Գյուղատնտեսությանը տրամադրվող վարկերի տոկոսադրույթի սուբսիդավորման գործընթացի կազմակերպման կարևոր նախադրյալներից է նշված բնագավառին առնչվող հայեցակարգի մշակումը, որի հիմնական նպատակը պետք է լինի (միջազգային փորձի համալիր ուսումնասիրության և տեղայնացման արդյունքում) կանխորոշելի հանրապետության տնտեսության ազրարային հատվածում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի մասնակի սուբսիդավորման սկզբունքները, ինչպես նաև հայեցակարգային նույնագումար պայմանները, ձևերը և մեխանիզմները, որոնց կիրառումն առավել նպաստավոր է երկրի ազրոպարենային համակարգի կայուն առաջընթացն ապահովելու համար: Նշված նպատակի ներանպատակներն են՝

- վարկավորման մատչելիության բարձրացման միջոցով նպաստել գյուղատնտեսությունում ապրանքային տնտեսությունների ձևավորմանը, գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավմանը,
- տրամադրվող վարկերի մասնակի սուբսիդավորման արդյունքում բարձրացնել ազրոպարենային համակարգի մրցունակության մակարդակը, նպաստել միջնորդ ֆինանսական կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության վարկավորման ռիսկայնության դիվերսիֆիկացմանը, վարկերի վերադարձելիության մակարդակի բարձրացմանը:

Կարևոր է առանձնացնել տրամադրվող վարկերի տոկոսադրույթների մասնակի սուբսիդավորման հիմնական սկզբունքները, որոնք, ըստ կատարված ուսումնասիրությունների, հետևյալն են՝

- ազրոպարենային համակարգի ներճյուղային կառուցվածքի բարելավումը, համեմատական առավելություններ ունեցող ներածյուղերի նախընտրելի մասնագիտացման խորացումը,
- պետական-մասնավոր հատվածների համագործակցության ընդլայնումը, վարկավորման մատչելիության բարձրացման միջոցով տնտեսությունների խոշորացման, կոռպարացման, մրցունակության բարձրացման գործընթացների խթանումը,
- սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային և գյուղատնտեսության վարման այլ անբարենպաստ տարածքների համաշակի գարգացումը,
- բնատնտեսական ներուժի արդյունավետ (հավասարակշռված) օգտագործումը, արտադրական ուժերի ապակենուրունացումը և ռացիոնալ տեղաբաշխումը,
- սուբսիդավորման գործընթացի վերահսկելիությունը, քափանցիկությունը, տեղեկատվության հասանելիության ապահովումը և հաշվետու լինելը,

- տրամադրվող վարկերի սուբյեկտավորման գործընթացում իրավահավասարության, իրավական պաշտպանվածության և սոցիալական արդարության ապահովումը,
- տրամադրվող պետական միջոցների տնտեսական հիմնավորվածությունը, հասցեականությունը և արդյունավետությունը:

Ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտել տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբյեկտավորման մոտեցումները և պայմանները:

Նախ, տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբյեկտավորման մոտեցումները և պայմանները բխում են վերը հիշատակված հիմնական նպատակից, ենթանպատակներից ու սկզբունքներից: Ուստի գյուղատնտեսական արտադրության սուբյեկտավորման համակարգի գործունեությունը նպատակառությունը է տարածքային գարգացման տարրերությունները մեղմելուն և տնտեսավարման պայմանների համահավասարեցմանը, գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացմանը, էքստենսիվ և ինտենսիվ գարգացման առկա ներուժի արդյունավետ օգտագործմանը, ապրանքային տնտեսությունների ձևավորման խթանմանը:

ԱՀՌ-2-ի նպատակային ցուցանիշներով իրականացվելիք ագրարային քաղաքականության արդյունքում խոչը ապրանքային տնտեսությունների տեսակարար կշիռը գյուղատնտեսության ավելացված արժեքում 2021 թվականին կկազմի 13.4 % 2006 թվականի 2.4 %-ի փախարեն¹: Այդ իսկ պատճառով վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբյեկտավորման հիմնական մոտեցումը փոքր և միջին ծավալով արտադրություն ունեցող տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների առաջնահերթ սուբյեկտավորումն է: Ըստ որում սուբյեկտավորումը կիրականացվի, ելնելով տրվող վարկերի չափից, ժամկետից, տոկոսադրույքից, գործարար ծրագրերի ուղղվածությունից (վարկավորման նպատակայնությունից) և այլ նախապայմաններից, որոնք կապահովեն հատկացվող պետական միջոցների արդյունավետ ուղղորդումը՝ հիմնվելով իրավահավասարության սկզբունքի վրա:

Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության, երկրի տնտեսությունում, այդ թվում՝ ագրարային հատվածում ստեղծված և կանխատեսվող իրավիճակի վերլուծության արդյունքում գյուղատնտեսական մթերք արտադրողներին (վերամշակողներին) տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբյեկտավորումը կիրականացվի հետևյալ պայմաններով.

- սուբյեկտավորման ենթակա վարկի տոկոսադրույքի չափը չպետք է գերազանցի 8 տոկոսային կետը (հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ), և սուբյեկտավորվող գումարը տարեկան չպետք է գերազանցի 500 հազ. դրամը,
- սուբյեկտավորվող վարկի առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի բուսաբուծությունում՝ 5 տարի, անասնապահությունում՝ 7 տարի ժամկետը,
- տոկոսադրույքի սուբյեկտավորման հաշվարկում չպետք է ներառվեն տուգանքները,
- սուբյեկտավորվող վարկի առավելագույն տոկոսադրույքը չպետք է էականորեն գերազանցի դրա ստացման պահին վարկային շուկայում ձևավորված միջին տոկոսադրույքի չափը,
- վարկառուին տրվում է միաժամանակյա միայն մեկ սուբյեկտավորվող վարկ,
- սուբյեկտավորվող վարկի արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է,
- վարկառուի կողմից վարկը ոչ նպատակային օգտագործելու դեպքում վարկի սուբյեկտավորումը դադարեցվում է,
- վարկերի սուբյեկտավորումն իրականացվում է նպատակային (շահառու) համայնքներում, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
- սուբյեկտավորվող տոկոսային կետերի չափը, որպես կանոն, պետք է պայմանավորվի համայնքի տեղադիրքով՝ նախապատվությունը տալով սահմանամերձ, լեռնային, բարձրենային տարածքների համայնքներին:

¹ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայված տարրերակի նախագիծ, Երևան, 2008թ., էջ 114-122:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ պետական բյուջեից պետք է մասնակի սուրսիրակորչին այն վարկերի տոկոսադրույքները, որոնք վարկառուները նպատակային օգտագործելու են ազդարային հատվածի և գյուղի զարգացման հետևյալ նախընտրելի ուղղություններով՝

- գյուղատնտեսական արտադրությունում նոր տեխնոլոգիաների ներդրում,
- գյուղական նախընտրելի մասնագիտացում, սեփական արտադրության գյուղմթերքի մշակման (վերամշակման) արտադրամասերի ստեղծում,
- բարձր հավելյալ արժեք ունեցող գյուղմթերքի արտադրության կազմակերպում, հետքերքահավաքային տեխնոլոգիաների զարգացում (տեսակավորում, փաթեթավորում, տարավորում, սառնարանային և պահեստային տնտեսության արդիականացում),
- հողային, ջրային, էներգետիկ և այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսական հողատեսքերի մելիորատիվ վիճակի բարելավում,
- արտահանման ներուժ ունեցող արտադրության ընդայնում, օրգանական գյուղատնտեսության խթանում,
- ջերմոցային պայմաններում (փակ գրունտում) բանջարեղենի տեսականու արտադրության կազմակերպում,
- ընտրասերման և առաջնային սերմնարուծության զարգացում, բազմամյա տնկարկների հիմնում, այգեգործության աշխարհագրության ընդայնում,
- անտառային ռեսուրսների (պտղահատապտղներ, դեղաբույսեր, սնկատեսակներ և այլն) մթերում և վերամշակում, ինչպես նաև անտառշինական աշխատանքների իրականացում,
- տոհմային անասնաբուծության կազմակերպում և զարգացում, անասնաբուժական կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
- մեղվարուծության, լճակային ձկնաբուծության, ոչ ավանդական թռչնաբուծության զարգացում,
- գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների գործընթացների բարելավում,
- ժողովրդական արհեստների, տնայնագործության, ագրոտուրիզմի և գյուղատնտեսական արտադրության մեջ այլընտրանքային գրադարձության խթանում,
- երիտասարդների կամ կանանց կողմից դեկավարվող տնտեսություններին աջակցություն,
- դաշտային կերարտադրության բարելավում, գյուղատնտեսական տարրեր կենդանիների և հասակային խմբերի համար լիարժեք համակցված կերերի արտադրություն,
- սպառողների առողջության համար սննդամթերքի անվտանգության ապահովում:

Վերը թվարկած ուղղությունները բխում են հանրապետության ազդարային հատվածում առաջընթացի ապահովմանն առնչվող Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008-2012 թվականների գործունեության ծրագրի, ԱՀՌ-2-ի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության և այլ ուղենիշային ծրագրերի (ռազմավարությունների) դրույթներից:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել կանխարոշել գյուղատնտեսությունում վարկերի տոկոսադրույքների սուրսիրակորման մեխանիզմները և ակնկալվող արդյունքները:

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ազրաբային ոլորտում տնտեսավարող ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի (մինչև 8 տոկոսային կետ) սուրսիրակորման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով կիրառվող մեխանիզմներից են.

- գյուղատնտեսության ոլորտի պետական կարգավորումն իրականացնող լիազոր մարմնի կողմից սուբսիդավորման ընթացակարգը, պայմանները, ձևերը հաստատող կարգի մշակումը և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ընդունումը,
 - միջնաժամկետ ծախսերի ծրագրում (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում) վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ներառումը,
 - սուբսիդավորումն իրականացնող (կազմակերպող) կառույցի և վարկատու կազմակերպությունների ընտրությունը, ըստ սույն հայեցակարգով սահմանված չափանիշների,
 - տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման արդյունավետության գնահատման ու մոնիթորինգի համակարգի ներդրումը,
 - սուբսիդավորման վերաբերյալ բնակչության իրազեկումը, հասարակության մասնակցային գործընթացի ապահովումը, գործունեության վերահսկելիությունը և քափանցիկությունը,
 - վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման իրավապայմանագրային կարգավորումը:
- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի մասնակի սուբսիդավորումից ակնկալվում են հետևյալ հիմնական արդյունքները.
 - ոլորտի արդյունավետության բարձրացում, միջին և խոշոր ապրանքային տնտեսությունների տեսակարար կշռի աճ,
 - երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, գյուղական աղքատության կրճատում,
 - գյուղատնտեսական արտադրանքի ծավալների հավելածի, արտադրության դիվերսիֆիկացման, մասնագիտացման, ներոլորտային կառուցվածքի բարելավման շնորհիվ ներքին և արտաքին շուկաներում ճյուղի մրցունակության բարձրացում,
 - տնտեսությունների խոշորացման, փոխառու միջոցների համալրման մատչելիության արդյունքում՝ բնակչության կենսամակարդակի բարձրացում,
 - բնական (հողային, ջրային), աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում,
 - սննդի վերամշակող արդյունարերության հումքային բազայի կայունացում, սննդամբերքի անվտանգության, առևտրային հաշվեկշռի բարելավման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում: